



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ
 Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԷՋ**

Կիրակի, Ապրիլ 1-ը տօնն է Զրիստոսի Երուսաղեմ յաղթական մուտքին, որ ծանօթ է Ծաղկազարդ անունով:

Ծաղկազարդի տօնին առիթով, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագ պիտի մատուցուի եւ օրուան խորհուրդը ներկայացնող քարոզ պիտի փոխանցուի մեր հաւատացեալներուն:

Մանուկները թափօր պիտի կազմեն, իսկ Ս. Պատարագի աւարտին պիտի կատարուի դռնբացեքի արարողութիւն:

Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, որ Անթիլիասի Մայրավանքին մէջ Թեմակալ Առաջնորդներու եւ Ազգային Իշխանութեանց ժողովին մասնակցելէ ետք շաբաթավերջին վերադարձաւ Լոս Անճելըս, Ծաղկազարդի տօնին Ս. Պատարագ պիտի մատուցէ Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ ու պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

Նոյն օրը Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, իսկ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան՝ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ:

**PRELATE TO CELEBRATE PALM SUNDAY
 AT HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

Sunday, April 1st is the feast of the triumphant entry of Jesus into Jerusalem, or Palm Sunday. There will be Holy Mass, a children's processional, and the ceremony of the opening of the portals in all Prelacy Churches to celebrate this festive day. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, having returned over the weekend from a clergy meeting in Antelias, will conduct Holy Mass and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

On the same day, H.E. Archbishop Yeprem Tabakian will conduct Holly Mass and deliver the sermon at St. Sarkis Church in Pasadena, while Very Rev. Fr. Muron

Aznikian will be at Holy Trinity Church in Fresno and Very Rev. Fr. Barthev Gulumian at St. Garabed Church in Hollywood.

ԱՄԱԳ ՇԱՔԹՈՒԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ծաղկազարդի տօնէն մինչեւ Ս. Յարութեան տօն երկարող շրջանը կը կոչուի Աւագ Շաբաթ:

Աւագ Շաբաթը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ու քրիստոնեայ հաւատացեալներուն համար ունի յատուկ նշանակութիւն, որովհետեւ այս ժամանակաշրջանը հարուստ է բազմաթիւ խորհուրդներով:

Շաբթուան իւրաքանչիւր օրը նուիրուած է Աստուածորդւոյն երկրաւոր կեանքի վերջին դէպքերուն կամ աստուածաշնչական դրուագներու, որոնց յատուկ արարողութիւններ տեղի կ'ունենան մեր եկեղեցիներուն մէջ:

Կրօնական ժողովի որոշումով եւ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինութեամբ, Աւագ շաբթուան ընթացքին ամէն օր երեկոյեան յատուկ ժամերգութիւններ տեղի պիտի ունենան Թեմիս եկեղեցիներուն մէջ:

Յայտնենք որ, Աւագ Շաբթուան ընթացքին, Թեմիս Առաջնորդ Սրբազանը այցելութիւններ պիտի տայ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն եւ պիտի ըլլայ մեր հաւատացեալ ժողովուրդին հետ:

Առաջնորդ Սրբազանին Աւագ շաբթուան ժամանակացոյցը հետեւեալն է.-

Երկուշաբթի, 2 Ապրիլ, Աւագ Երկուշաբթին յիշատակութեան օր է Անպտուղ Թգենիին: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ արարողութեան:

Երեքշաբթի, 3 Ապրիլ, Աւագ Երեքշաբթին յիշատակի օր է 10 կոյսերու: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեան:

Չորեքշաբթի, 4 Ապրիլ, Աւագ Չորեքշաբթին Յուդային կողմէ Աստուածորդւոյն մատնութեան օրն է: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեան:

Հինգշաբթի, 5 Ապրիլ, Աւագ Հինգշաբթին իր մէջ կ'ընդգրկէ զանազան խորհուրդներ՝ Վերջին Ընթրիք, հաղորդութեան հաստատման խորհուրդ, ոտնլուայ, ձերբակալութիւն եւ խաւարման գիշեր: Առաջնորդ Սրբազան Հայրը Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ պիտի կատարէ ոտնլուայի կարգը, իսկ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ պիտի հանդիսապետէ Խաւարման արարողութեան:

Ուրբաթ, 6 Ապրիլ, Աւագ Ուրբաթ, խաչելութիւն եւ թաղում: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ թաղման արարողութեան:

Շաբաթ, 7 Ապրիլ, Աւագ Շաբաթ, ճրագալոյց Ս. Յարութեան: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ ճրագալոյցի արարողութեան:

Կիրակի, 8 Ապրիլ, Սուրբ Յարութեան Տօն, Սուրբ Չատիկ: Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Իսկ Երկուշաբթի, Ապրիլ 9-ին, առաւօտեան ժամը 10-ին, Ս. Չատկուան Տօնին առիթով, եւ համաձայն տարիներու աւանդութեան, ի յիշատակ համայն ննջեցելոց ազգիս հայոց, Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան Hall of Liberty սրահին մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր:

Նմանապէս հոգեհանգստեան պաշտօն տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Forest Lawn գերեզմանատան Church of the Recessional եկեղեցւոյ մէջ: Արարողութեանց պիտի մասնակցին Թեմիս Զոգեւորականաց Դասու անդամները:

PRELATE'S HOLY WEEK SCHEDULE

Upon the directive of H.E. Archbishop Mardirossian and the Religious Council, services will be offered daily during Holy Week in all Prelacy Churches.

The following is the Prelate's Holy Week schedule:

Holy Monday - The parable of the barren fig tree: Holy Martyrs Church, Encino

Holy Tuesday - Remembrance of the Ten Virgins: St. Mary's Church, Glendale

Holy Wednesday - Betrayal of Jesus and Anointing of His Feet: St. Mary's

Maundy Thursday - Washing of the Feet: St. Sarkis Church, Pasadena

Vigil: Holy Cross Cathedral, Montebello

Good Friday - Crucifixion and Burial: Forty Martyrs Church, Orange County

Easter Eve – Lighting of Candles (*Jrakalooys*): St. Garabed Church, Hollywood

Easter: St. Mary's Church

On Monday, April 9th, requiem service will be held presided over by the Prelate and with the participation of Prelacy Clergy at the Hollywood Hills Forest Lawn Hall of Liberty of and also at the Glendale Forest Lawn Church of the Recessional.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.